



# ԴՐՈՇԱԿ

## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱԸ“ ՕՐԳԱՆ

Մայիս, 1891 թ.

Այս տարուայ սկզբներին լոյս տեսած «Թուուցիկ թերթերով» արդէն յայտարարուած է, որ «Հ. Յ. Դաշնակցութիւնը» պիտի ունենայ իր սեփական օրդանը «Դրօշակ» անունով, որի առաջին համարը ահա սրանով լոյս է տեսնում :

Ներկայումս գոյութիւն ունեցող օրդանները, որոնք նոյնպէս նուիրուած են հայկական խնդրի լուծման, մեր կարծիքով ամբողջապէս չեն իրականացնում այն պայմանները, որ ապահովացնում են կանոնաւոր կը ուրը :

«Դրօշակը» հանդէս է գալիս իբրև օրդան մի կազմակերպութեան, որ ունի որոշ միջոցներ իր նպատակին հասնելու համար :

«Դրօշակը» մի կողմից չի կարող բոլորովին համեմատուիլ ինչպէս նրանց հետ, որոնք ուզում են միայն քաղաքագիտութեան (դիպլոմատիայի) միջոցով հասնել իրանց նպատակին, որովհետեւ բացառապէս դիպլոմատիան ոչինչ չի անիլ դրդուած մարդասիրութիւնից : Մեր նիւթապաշտ դարում դիպլոմատները ղեկավարվում են սեփական շահերով եւ աւելի ուժեղ իրաւունքներով : «Եւրոպան չկայ, ասաց նորերումս կայնօկին, եւ մինչեւ հայկական հողը չչաղախուի արիւնով՝ թող դիտնան հայերը որ ոչինչ չեն ստանալ» :

Միւս կողմից «Դրօշակը» չի կարող համեմատուիլ ինչպէս նրանց հետ որոնք նպատակ են դնում իրականացնել այն հասարական կազմակերպութիւնը, որի համար այժմ կարելի է մաքառել միայն Արեւմտեան Եւրոպայում, որովհետեւ քանի որ Տաճկաստանը չունի բոլորովին գործարանական արդիւնաբերութիւն եւ խոչըր ինդուստրիայի զարգացում՝ անբնական է այդ տեսակ խնդիրներ յարուցանելը : Այն երկրում, ուր դերակազմ է երկրագործութիւնը եւ նահապետական կուլտուրան՝ խօսք չի կարող լինել Արեւմտեան Եւրոպայի սօցիալիզմի մասին, ուր կուլտուրան անհամեմատ աւելի բարձր է եւ տիրապետում են որոշ սօցիալական պայմաններ : Տնտեսական խնդիրներ շօշափելիս պէտք

է ղեկավարուել երկրի կուլտուրայով եւ նրա ազգային ու պատմական առանձնայատկութիւններով. նամանակնդ որ մեր աղքի դիտակցութեան մէջ պահպանուել են այնպիսի հողատիրական ձեւեր, որ ուրիշ նպատակաւոր պայմաններում կը լինէին նրա բարօրութեան դիտաւոր գրաւականը. այն է՝ հողը պատկանում է մըշակողին : Իսկ հողային հարցը մեր ամենազլխաւոր հարցն է :

«Դրօշակը» պէտք է պաշտպանէ առհասարակ այն բոլոր պայմանները, որոնք նպատակ են ժողովրդի ընդհանուր բարօրութեան քաղաքական եւ տնտեսական կողմից : Հեռացնելով այն պայմանները, որ խեղդում են հայ ազգը, մենք ուզում ենք տալ նրան միջոց վերածնուելու եւ ընդունելու քաղաքակրթութիւնը եւ մինչեւ անգամ տարածել իր շուրջը : Ղեկավարուելով այն բարձր բարոյական սկզբունքներով, որ եւրոպացի առաջնակարգ գործիչների իդէալն է կազմում, մենք պէտք է միշտ պաշտպան հանդիսանանք դարերով ճնշուած ժողովրդին. իւրաքանչիւր հարց վճռելիս պէտք է ուշադրութեան առնենք լրջութեամբ բոլոր հանգամանքները դուշադրութիւնը (կօմբինացիան) եւ թշնամու դէմ կուռելիս պէտք է լինինք անխնայ, ինչպէս որ նա մեզ չի խնայում : Մենք խորհուրդ ենք տալու գործարարել բոլոր միջոցները, որ վերջնականապէս քայքայենք Թիւրքիայի անբարոյականացած պետական կազմակերպութիւնը (օրդանիզմը) : Բացի դրանից Դրօշակը իբրև «Հ. Յ. Դաշնակցութեան» օրդան պէտք է պատասխանի այն բոլոր հարցերին, որ կը ծագեն այդ կազմակերպութեան գործիչների մէջ թէ կուռի բողոքում եւ թէ գործունէութեան յետագայ ընթացքներում (մօմենտ) :

Վերել մենք բերինք համառօտ ձեւով այն զանազանութիւնը՝ գոյութիւն ունեցող օրդաններից, որ ստիպում է մեզ երեւան գալ մի նոր օրդանով. սակայն որչափ եւ զանազանուենք ուղղութեամբ նրանցից, այնուամենայնիւ մենք ուզում ենք նրանց հետ ընկերական յարաբերութեան մէջ լինել, որովհետեւ բոլորս էլ կըրվում ենք մի ընդհանուր թշնամու դէմ :

Հիմա տեսնենք ո՛րն է Հայկական ինդրի լուծման այն ճանապարհը, որ մենք ենք ընդունում :

Այժմ թուլացած և քայքայուող Օսմանեան պետութիւնը մի ժամանակ հզօր պետութիւն էր : Նրան ստեղծեցին այն վայրենի ու արիւնարբու Սելջուկ ու Տաճիկ մօնղօլական ցեղերը, որ թափուեցին միջին Ասիայի խորքերից եւ կրակի ու սրի անցկացնելով փոքր Ասիայի ծաղկած ու քաղաքակիրթ երկիրները, հասան մինչեւ Պօլիսը, վերջին նրան, տիրեցին Եւրոպայի ամենալաւ երկիրներին, հաստատեցին բռնութեան հիմունքների վրայ իրանց իշխանութիւնը եւ նստակեաց կեանք սկսեցին վարել. բայց նրանք անընդունակ եղան եւրոպական քաղաքակրթութիւնը եւ կարգ ու կանոններ ընդունել. եւ հաստատուելու օրից կամայականութիւնը, կաշառակերութիւնը եւ քրիստոնեաներին ճնշելն եղաւ հարեմի իշխանութեան վարչական սկզբունքները : Այդ տեսակ հիմունքների վրայ հաստատուած պետական կազմակերպութեան ոյժը չէր կարող յարատեւ լինել, այդ պատճառով սկսեց նա կազմալուծուել ու քայքայուել. եւ մի քանի սուլթանների ճիւղ վերանորոգութիւններով կանգնեցնել իրանց պետութեան անկումը՝ ոչինչ հետեւանք չունեցաւ : Այս բոլորին աւելացաւ Ղրիմի պատերազմից յետոյ թիւրքիայի սնանկութիւնը : 1854—74թ. փոխարինութիւն է տրուած 4552 միլիօն Փրանկ, որի միայն տոկոսն ամենայն տարի կազմում է 75 միլիօն եւ եւրոպական տէրութիւններն անապահով դրութեան մէջ տեսնելով պարտքերի կանոնաւոր վճարումն արդէն իրանք մտել են երկրի մէջ եւ մի քանի եկամտներ իրանք են հաւաքում : Տարէցատարի այնուհետեւ մեծանում են տարեկան բիւզճէի դէֆիցիտը, որ 1876թ. հասել էր 100 միլիօնի, իսկ ողւս տաճկական պատերազմից յետոյ համարեա տասնապատկուեց :

Թիւրքիայի թուլութիւնն ակներեւ եղաւ դեռ 1683 թուականին Վիէնայի մօտ նրա շարաչար պարտութիւնից յետոյ : Խրախուսուելով թշնամու այդ թուլութիւնից օսմանեան պետութեան ծանր լծի տակ դոնուող քրիստոնեայ ազգերը բարձրացրին իրանց դլուխը եւ ողիւսրուելով տանջուած-հայրենիքի ազատութեան գազափարով՝ սկսեցին կատաղի և հերոսական կռիւ ճնշող կառավարութեան դէմ : Մէկը միւսի յետեւից ապստամբում են՝ Ունդարիան, Սերբիան, Յունաստանը եւ Ռումանեան : Փոքր ազգերի պատմութեան մէջ բացվում են մի շարք փայլուն էջեր անճնադոհուութեան եւ հերոսութեան : Եւ այդ ապստամբ փոքրիկ, բայց քաջ ազգերը, վայր են դնում իրանց դէնքը միայն այն ժամանակ, երբ յաղթելով դարաւոր թշնամուն՝ ազատութիւն են ձեռք բերում : Մեր աչքի տեսլ կատարուեց

Բուլղարիայի ազատութիւնը. մենք սկանաւես եղանք այն յաղթութեան, որ անմահ փառքով ծածկեց Բուլղարիայի որդոց : Բուլղարիան էլ միւս փոքր ազգերի պէս ձեռք բերաւ իր ազատութիւնը ահազին զոհողութիւններով եւ արիւն թափելով :

Ահա պատմութեան մեզ տուած խրատական դասը : Հիմա հասել է հերթը հայերին՝ թօթափել տաճկական անարդ եւ սպանիչ լուծը : Արիական մեծ ընտանիքից միայն հայոց ցեղն է կրում մօնղօլական ամօթարեր լուծը. չնայելով որ հայոց ազգն աւելի է նեղուում սուլթանների բռնակալութեան ներքոյ, չնայելով սնանկացած տէրութեան տարէցտարի աւելցող ծախսերն իրեն հարկ իրանց բոլոր ծանրութիւնով փաթաթվում են հայերի՝ պետութեան այդ ամենաչխատասէր ժողովրդի վրին, այնուամենայնիւ նա դեռ համբերութեամբ կրում է պատի ու կեանքի զրկանքները :

Տաճկահայերի այժմեան վիճակը միանգամայն անտանելի է. դրան ապացոյց են եւրոպական տէրութիւնների հիւպատոսների զեկուցումները, մեր եւ եւրոպական պիտնական ճանապարհորդների դիտողութիւնները, ժողովրդի պանդխտութեան դիմելը, նրա մշտական դանդաղ ու կոծը, Պօլսի պատրիարքների Բ. Դոանը ներկայացրած մանրամասն բողոքները. այս բոլորը կենդանի վկաներ են Տաճկահայերի ներկայ դատն վիճակի եւ անտանելի դրութեանը :

Կատարեալ անապահովութիւն կեանքի եւ գոյքի, անվերջանալի աւարտութիւններ քիւրդ եւ չէրքէզ հրոսակների, աւազակային անխղճութեան հասցրած հարստահարութիւն կաշառեաների կողմից՝ սկսած վալիից մինչեւ վերջին միւղիբը, նրանց անընդունակութիւնը, տգիտութիւնը եւ կաշառակերութիւնը, անարդարութիւն դատարանում, անասելի հարկեր եւ վեղճումներ հարկահանների եւ վաշխառուների, ղեկծումներ Բարձրագոյն իշխանութեան կողմից, հարածանք կրօնի, ազգութեան, վերջապէս սանձարձակ բռնութիւն դպրոցների, եկեղեցիների, խօսելու, գրելու դէմ, մի բռնութիւն, որը հազարաւոր անմեղներ փթեցնում է բանտերում, տանջում Արարիայի եւ Աֆրիկայի խորքերում, դցում պանդխտութեան պիւրկը, տանում դէպի կրօնափոխութիւն, ահա այն դժոխքը, որ կոչվում է Թիւրքա—Հայաստան, ահա այն դժոխքը, որի բոլոր սարսափանքները յայտնի են ամբողջ ազգին, ամբողջ աշխարհին . . . :

Նորից նկարագրել այդ բոլորը, կը նշանակի կրկնել այն, ինչ որ վաղուց յայտնի է եւ ապացուցուած :

Այս յուսահատ դրութեան մէջ էր հայը եւ այն ժամանակ, երբ նրա անմոռանալի եւ մեծ հայրենասէլ պատրիարք Ներսէսը վերջին պատերազմի ժամանակ ամենայն ջանք դործ դրեց լսելի անելու եւրոպական պե-

տական մարդկանց մօտ հայերի պահանջները: Ուղարկուած պատգամաւորութիւնները, որոնց թւումն էր եւ Քրիմեան Հայրիկը, կատարեցին իրանց դերը մեծ յաջողութեամբ ներկայացնելով Եւրոպայի առաջ հայ ազգի ներկայ թշուառ գրութիւնը եւ մտցնել տալով Բէրլինի դաշնագրի մէջ հայոց ազգին վերաբերեալ 61—րդ յօդուածը:

Ներսէս պատրիարքի այս խոշոր եւ հեռատես քաղաքական քայլը մեր ինքնաճանաչութեան համար ահալին նշանակութիւն ունի եւ մեր ազգի նոր պատմութեան մէջ մի նոր դարադրուելի սկսող էջ պէտք է համարուի. այդ օրուանից հայոց խնդիրը դառնում է արդէն եւրոպական դիպլոմատիայի եւ միջնազգային իրաւունքի խնդիր: Այդ յօդուածի համաձայն տաճկաց տէրութիւնը պարտաւորուած էր մտցնել քրիստոնէաբնակ նահանգներում այն բոլոր բարենորոգումները, որոնք անհրաժեշտ են քրիստոնեայ ազգերի կեանքը եւ գոյքը ապահովացնելու համար: Միեւնոյն ժամանակ Ներսէս պատրիարքը իր պատգամաւորների միջոցով նոյն Բէրլինի վեհաժողովին ներկայացրեց եւ մի տեղեկագիր, ուր որ աւելի մանրամասն կերպով բացատրուած են այն բարենորոգումները, որոնք անհրաժեշտ են հայաբնակ նահանգներում: Մէջ կը բերենք «Դրօշակի» այս համարում այդ տեղեկագիրը, որովհետեւ մեր այժմեան պահանջների գլխաւոր կէտերը մնում են մօտաւորապէս միեւնոյնը:

Արանից յետոյ անցան տարիներ, զանազան մասնաժողովներ եւ խոստումներ արաւ Սուլթանը, որոնց նրպատակն էր քննեցնել խնդիրը եւ մոռացութեան տալ 61—րդ յօդուածը: Երբ անուրբ մահը իւրեց ազգից հայրենասէր պատրիարքին, աւելի եւս դժուարացաւ հայոց հարցի լուծումը, մանաւանդ որ նրա մահից յետոյ Պօլսի պատրիարքներից եւ ոչ մէկը չկարողացաւ շարունակել իրանց արժանաւոր նախորդի սկսածը:

Քանիցս անգամ Անդլիան եւ եւրոպական ուրիշ պետութիւնները յիշեցրել են Բ. Դոսն նրա պարտաւորութիւնները Եւրոպայի առաջ 61—րդ յօդուածի վերաբերմամբ. քանիցս անգամ Պօլսի հայոց պատրիարքները դիմել են Սուլթանին խնդրելով նրա ամենաողորմած ուշադրութիւնը իր հաւատարիմ ու աշխատասէր հպատակ ժողովրդի վրայ, բայց Բ. Դոսն պատասխանը միշտ եղել է թէ՛ հայերը դո՛ս են իրանց վիճակից, թէ՛ նրանք փառաբանում են Աստուծուն, որ շնորհել է իրանց թիւրք կառավարութեան նման մի «ողորմած կառավարութիւն» եւ այդ այն ժամանակ, երբ հայերի գանդաւանների ազադակը երկինք էր հասնում, երբ Մուսայ—բէյի շարագործութիւնները ամբողջ լուսաւոր աշխարհն էին ապշեցնում, երբ Հայաստանի բոլոր կող-

մերում ամենաքստմնելի բարբարոսութիւններ եւ ոճրագործութիւններ էին կատարվում տասն եւ իններորդ դարու քաղաքակիրթ Եւրոպայի աչքի առաջ:

Եւ ի՞նչ միջոցներ էր ձեռք առնում թիւրքաց կառավարութիւնը այդ բոլոր անիրաւութիւնների առաջն ստնելու համար. մինչդեռ մշեցիների հետ Եւրոպան պահանջում էր խիստ դատաստանի ենթարկել Մուսայ—բէյ քերդ աւազակին, թիւրքաց կառավարութիւնը երկար ժամանակ նրան Պօլսում փայփայելուց յետոյ վերջը նրան միջոց տուեց փոխելու՝ դատաստանական մի բանի ձեւականութիւններ կատարելով. մինչդեռ հայերն ազաչում են ազատել իրանց կեանքը, գոյքն ու պատիւը քերդ եւ շերքէյ հրոսակների վայրաց ձեռքերից, թիւրքաց կառավարութիւնը յինաւորուած խմբեր է կազմում այդ վայրենի եւ աւազակարարց ցեղերից. մինչդեռ հայերը խնդրում են թեթեւացնել նրանց հարկերի ծանրութիւնը, Տաճկաց կառավարութիւնը նորա-նոր ծանր հարկեր է դնում. նա մինչև անգամ աշխատում է սահմանափակել հայերին հոյ գնելու իրաւունքը այն նահանգներում, ուր դարերից ի վեր կազմել են նրանց հայրենիքը: Ամենայն օր նոր հարածանջներ, խուզարկութիւններ, բանտարկութիւններ ու ոքոսորներ: Ամէն յոյս կորած ժողովուրդն աղքատութեան ու բռնութեան երեսից դունդադուեց թողնում է իր դժբաղը հայրենիքը և դիմում պանդխտութեան եւ գողթականութեան ու այսպիսով ամաչանում է Հայաստանը, մեր նախնեաց արիւնով շապախուած հայրենիքը:

Այսպէս է եղել հայերի դրութիւնը Տաճկա—Հայաստանում ամբողջ դարերի ընթացքում եւ այսպէս էլ կը մնայ, եթէ մենք մեր յոյսը դնենք Տաճկաց կառավարութեան սեփական բարեհաճութեան կամ եւրոպական դիպլոմատիայի վրայ: Լինին պատճառները պետական, ցեղական թէ՛ կրօնական՝ այդ միեւնոյն է. փառսը նրանումն է, որ Տաճկաստանը անընդունակ է ինքը որեւէ վերանորոգումն մտցնելու եւ, ինչպէս մեզ ունուցանում է ուրիշ փոքր ազգերի պատմական փորձը, մի այն գէնքով կարելի է ստիպել նրան իբրագործել մեր արդար պահանջները: Հայերը ուզում են ազատուել մի քաջբայուող տէրութիւնից, սր տարածում է իր շուրջը մահ եւ ապականութիւն: Ազատութիւն ձեռք բերելով՝ հայ ազգն ուզում է քաղաքակիրթ կեանք եւ իր բողմակողմանի ընդունակութիւնների զարգացում: Հայերը ողկորուելով մարդասիրութեամբ, կրօնայութեամբ ու կրօնի անխտոսութեամբ կը ստեղծեն մարդկային զարգացման այսպիսի պայմաններ, որոնց մէջ կարող են

ղարգանալ թէ մահմեդական եւ թէ քրիստոնեայ ժողովորդները :

Մեր կռիւը Տաճկաց կառավարութեան դէմ ոչ միայն ազդեցիկ կռիւ է, այլեւ եւրոպական քաղաքակրթութեան եւ մարդկային իրաւունքների կռիւ՝ յօդուածամբողջ մարդկութեան եւ կուլտուրայի :

Ամփոփենք մեր խօսքը :

Մենք տեսանք, որ Տաճկաց կառավարութիւնը անընդունակ է ու չի ուզում որեւէ բարենորոգումն մտցնել մեր հայրենիքում . միւս կողմից պարզ է, որ դիպլոմատիան, իր մինչեւ այժմ գործ դրած միջոցներով, անոր եղաւ ազդել թիւրքաց կառավարութեան նման ծոյլ, կամակոր, տգէտ ու թոյլ կառավարութեան վերայ :

Ուրիշ աւելի ազդու միջոցների դիպլոմատիան ոչ դիմում է եւ ոչ էլ կը դիմի, քանի որ Եւրոպական չէ կամենում հայերի համար «երկու զինուորի արիւն անդամ թափել», ինչպէս մի ժամանակ Բուլղարիայի վերաբերմամբ ասաց իշխան Բիսմարկը :

Ուրեմն, Տաճկահայերի կողմից միանգամայն անօգուտ եւ մինչեւ անգամ վտանգաւոր է յոյս դնել օտարի վրայ եւ սպասել թէ թիւրքաց կառավարութիւնը ինքը իր կամքով բարենորոգումներ կը շնորհի հայերին : Յանկացած վիճակը ձեռք բերելու համար մեզ մընում է միայն դիմել այն միջոցին, որին դիմել են մեզանից առաջ միեւնոյն հանդամանքների մէջ դատուող ուրիշ մեզ նման քրիստոնեայ ազգերը : Այդ միջոցը ժողովրդական ազատամբութիւնն է : Ուրիշ ելք չկայ :

Ահա այսպիսի հանդամանքների արգասիք է «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը» . նրա գոյութիւնը հիմնուած է Տաճկա-Հայերի այն դիպակցութեան վրայ որ այլեւս անկարելի է տանել այսպիսի ամօթալի վիճակ ու սարսափելի դրութիւն :

«Դաշնակցութիւնը» մի քանի անձանց հայրենասիրական ձգտումների արհեստական պտուղ չէ, այլ ամբողջ ազգի հասունացած ինքնաձանաչութեան, կամքի ու վճռի արտայայտութիւն :

Նա՛, Հայ ազգի բողոքի եւ վրէժխնդրութեան ուղին է : Այս է նրա սկզբունքն ու նպատակը :

Եւ այդ սկզբունքի ու նպատակի արտայայտութիւն է Դաշնակցութեան «Դրօշակը» :

Դիւարբերի վերայէթի, այսինքն Սարբերդի սանջակի արեւելեան մասը, Արգանա սանջակը եւ Սղերտի սանջակի հիւսիսային մասը, որոնք կաղմում են Մեծ-Հայաստանի Տաճկական մասը, եւ բացի դրանից առեւտրական յարաբերութիւնները թեթեւացնելու համար Բիզնտաւանդիստը, որ Տրապիզոնի եւ Բաթումի մէջտեղն է :

Հայաստանը կը կառավարուի Հայ ընդհանուր նահապետով (գեներալ-գուբերնատոր), որ կը նշանակուի Բարձր-Դռնից մեծ պետութիւնների համաձայնութեամբ : Նա իր բնակավայրը (բեզինդեֆիա) կունենայ էրզրումում : Ընդհանուր նահանգապետը կունենայ գործադիր իշխանութեան բոլոր իրաւունքները, նա կը հսկի ամբողջ երկրի կարգի եւ հասարակական ապահովութեան պահպանութեան վրայ, կը ստանայ հարկերը եւ իր պատասխանատուութեան տակ կը նշանակի վարչական պաշտօնեաներին : Նա կը նշանակի դատաւորներին, կը հրաւիրի իր նախագահութեան տակ Ընդհանուր Խորհուրդը եւ հսկողութիւն կունենայ երկրի բոլոր վարչական գործերի վրայ :

Նշանակուելով իր պաշտօնում հինգ տարով՝ ընդհանուր նահանգապետը կարող է պաշտօնանկ լինել Բարձր Դռնից միայն մեծ պետութիւնների համաձայնութեամբ :

Կը լինի Կենդրոնական վարչութեան խորհուրդ ընդհանուր նահանգապետի նախագահութեամբ, որի անդամները կը լինին . 1. Ֆինանսների կառավարիչը, 2. Հասարակական շինութիւնների կառավարիչը, 3. Իրաւադէտ խորհրդականը, 4. Հասարակական գործի հրամանատարը, 5. Հայոց դպրոցների տեսուչը, 6. Մահմետական դպրոցների տեսուչը . :

Եսկիրը կը բաժանուի սանջակների, իսկ վերջինները կը բաժանուին զէյնների : Սանջակները եւ զէյնների կառավարիչները կը նշանակուին ընդհանուր նահանգապետից : Սրանք ընդհանուր նահանգապետի կողմից ուղարկուած գործակալներն են եւ Կերկայացնում են նրան երկրի բաժանմունքների մէջ : Նրանց օգնելու համար ընդհանուր նահանգապետը նշանակում է երկու խորհրդականներ :

Բ

Որովհետեւ կարգի եւ հասարակական ապահովութեան պահպանութիւնը յանձնուած է երկրի տեղական կառավարութեանը, այդ պատճառով երկրի ընդհանուր մուտքից միայն 20 տոկոսը կուղարկուի ամեն տարի կայսերական Ֆինանսական նախարարութեանը :

Որուչելով նախապէս երկրի մնացած եկամտից այն

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐԿԻ ՆԱԽԱԳԻԾԸ  
ՏԱԶԿԱ—ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Ա

Տաճկա-Հայաստանը պարունակում է իր մէջ էրզրումի եւ վանի վերայէթները (1) հիւսիսային մասը

(1) Պէտք է ասած, որ այդ վերայէթների մէջ մըտուում են եւ Մուշի, Բազէշի սանջակները :

ծախքերը, որոնք հարկաւոր են քաղաքական եւ դատաստանական վարչութեան համար, եւ ոստիկանութեան ու միլիցիայի պահանջները համար, աւելորդ գումարը գործ կը դրուի հետեւեալ կերպով՝ ա. 80 տոկոսը գործ կածուի ճանապարհների հազարդակցութեան եւ ուրիշ հասարակական գործերի վրայ:

բ. 20 տոկոսը ուսումնարաններ հիմնելու եւ պահելու համար: Վեր առնելով բարձրագոյն դպրոցների համար պահանջուած դրամը, մնացածը կը բաժնուի իբրեւ նպաստ մահմետական եւ քրիստոնեայ դպրոցներին՝ համեմատ նրանց թուին:

Գ

Կը լինի մահմեդական դատարանների մի գլխաւոր պետ, որ կը նշանակուի Սուլթանից եւ որ հսկողութիւն կունենայ բոլոր երկրում գործող Շերի դատարանները վրայ:

Շերի դատարանները կը վճռեն միայն մահմեդականների վէճերը: Բոլոր քաղաքացիական, քրէական եւ առեւտրական վէճերը քրիստոնեաների մէջ կամ քրիստոնեաների եւ մահմեդականների մէջ կը քննուին սովորական դատարաններում. սրանք կազմուած կը լինին ամեն մէկը երեք դատաւորներից, որոնցից մէկը կը կատարի նախագահի պարտաւորութիւնները: Ընդհանուր նահանգապետը նշանակում է դատաւորներին եւ որոշում է նոսնց նախագահներին: Հաշտարար դատարանը վարում է զէզէի փոխ-նահանգապետը եւ նրա խորհրդականները:

Առանձին կանոնադրութիւններ կը որոշեն Շերի դատարանների, սովորական դատարանների եւ հաշտարար դատաւորների թիւը եւ իրաւունքների սահմանները:

Համաձայն արդարադատութեան եւրոպական նոր սկզբունքների կը մշակուի քաղաքական եւ քրէական կոդեքս:

Գ

Կը լինի դաւանութեան լիակատար ազատութիւն: Հոգեւորականութեան պահելը ինչպէս եւ կրօնական հիմնարկութիւնների պահելը կը կազմի ամեն մի համայնքի պարտականութիւնը:

Ե

Երկրի ապահովութիւնը պահպանուած է՝ 1. ժամդարմեր(այով (ոստիկանութիւն) եւ 2. տեղական միլիցիայով (զօրք):

Միլիցիան կը կազմուի ի բաց առեալ քրդերը, չէրքէզները եւ սրիշ վայրենի ցեղերը՝ 1. հայերից 2. ոչ-հայ տարրից, որ աւելի քան 5 տարի բնակութիւն է հաստատել այդ երկրում:

Ժանդարմերիան պահպանում է կարգը ապահովութիւնը երկրի ամբողջ տարածութեան վրայ:

Ժանդարմերիայի պետին նշանակում է ընդհանուր

նահանգապետը, որին անմիջապէս նա հպատակուած է:

Միլիցիան գտնվում է զօրքերի ընդհանուր հրամանատարի իշխանութեան տակ եւ հարկաւոր զէպքերում պարտաւոր է օգնել ժանդարմերիային:

Ծան. Սովորական ժամանակներում միլիցիան կազմուած պիտի լինի 4000 զինուած մարդերից. ըստ որում չպիտի ի նկատի առնուին այն կանոնաւոր զօրաւորները, որոնց Կայսերական կառավարութիւնը կը կամենայ տեղաւորել իր հաշուով երկրի բերդերում եւ ամրոցներում:

Զ

Ընդհանուր խորհուրդը հրաւիրվում է ժողովի՝ տապով. իւրաքանչիւր զեզէ կուլարիի երկու պատգամաւորներ՝ մէկը հայ, միւսը մահմեդական, որոնք կը նտրուին զեզէի հայ եւ մահմեդական ազգաբնակիչութիւններից:

Այս պատգամաւորները հաւաքուելով սանջակի գլխաւոր քաղաքում կը նտրեն միասին երկու խորհրդական սանջակի կողմից՝ մէկը քրիստոնեայ, միւսը մահմեդական:

Երկու զէպքերում եւս ընտրողներ եւ ընտրելիք են՝ 1. երկրի բոլոր բնակիչները՝ սկսած 25 տարեկանից, որոնք ունին սեփականութիւն, կամ վճարում են որեւէ ուղղակի հարկ: 2. զանազան դաւանութիւնների հոգեւորականութիւնը եւ պաշտօնեաները: 3. Ուսումնարանների ուսուցիչներն ու դաստիարակները:

Ընդհանուր խորհուրդը հրաւիրուած է ժողովի՝ տարին մի անգամ երկրի գլխաւոր քաղաքում, որպէսզի ջննի եւ վերահսկի երկրի ել եւ մուտքը եւ հարկերի բաժանումը: Ընդհանուր նահանգապետը պարտաւոր է ներկայացնել այս խորհրդին տարեկան ելեւմտից հաշիւը:

Հարկերի հաւաքելու եւ բաժանելու ձեւը կը որոշուի՝ նորից ի նկատի առնելով երկրի հարստութիւնների զարգացման թեթեւացնելը:

Ընդհանուր նահանգապետը եւ ընդհանուր խորհուրդը փոխադարձ համաձայնութեամբ կը որոշեն 5 տարին մի անգամ այն գումարը, որ պիտի հասնի Բարձր-Պոսանը վերեւ դրուած կէտերի համաձայն:

Է

Մեծ պետութիւնները կը նշանակեն մի տարով միջազգային մասնաժողով այս ծրագրի իրագործմանը վերահսկելու համար, որ պիտի գործադրուի երեք ամսուայ ընթացքում՝ սկսած այս արձանագրութիւնը ըստօրայրելուց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Արտաքին տեսութեան նպատակն է պարբերաբար ծանօթացնել ընթերցողներին եւրոպական հասարակական կարծիքի եւ դիվլոմատիայի տրամադրութեան հետ ճաճկա-Հայերի վերաբերութեամբ: Դրա համար մենք

կօդառուենք թէ՛ պաշտօնական հրատարակութիւններէրց, ինչպիսին է Անգլիական Կապոյտ դիրքը, թէ՛ Եւրոպական լրագիրներէրց ու նոր դուրս եկած դրքերէրց եւ թէ՛ մասնաւոր տեղեկութիւններէրց :

Ընդհանրապէս խօսելով եւրոպական հասարակական կարծիքի մասին հայկական հարցի վերաբերմամբ, կարելի է ասել որ այդ հարցը հետզհետէ աւելի եւ աւելի է Եւրոպայի ուշադրութեան առարկայ դառնում : Ժամանակի ընթացքում համեմատաբար քիչ են լսվում այնպիսի ձայներ, որոնք առաջ շատ յաճախ էին կրկնվում մամուլի մէջ, այն է՝ թէ հայկական հարց չի կարող լինել, թէ բոլոր Տաճկա-Հայերի կրած ճնշումներին մասին պատմածները սուտ կամ չափազանց քաներ են, թէ Տաճկա-Հայերը բոլորովին բաւական են իրանց դրութիւնից, եւ բոլոր ազմուկները մի խումբ խռովարարների գործ է, եւ այլն եւ այլն . . .

Հիմա արդէն պաշտօնական դրութիւնները եւ պահպանողական լրագիրների թրքամուլ թղթակիցներն անգամ սկսում են խոստովանել Տաճկա-Հայերի դրութեան թշուառ կողմերը : Հիմա նոյնն անում է անգլիական կառավարութեան արտաքին գործոց նախարար Ֆերդիւսօնը՝ պառլամենտում արած իր վերջին ատենարանութեան մէջ :

Անգլիական պահպանողականների գլխաւոր օրգաններէրց մէկի թղթակիցը ներկայումս գտնուելով Էրզրումում, այնտեղից ուղարկել է իր թերթին մի քանի թղթակցութիւններ, որտեղ յառաջ է բերում բաղձաթիւ դէպքեր չարագործութիւնների, անիրաւութիւնների եւ այլն :

Թղթակիցը Տաճկանում արած իր բոլոր դիտողութիւններից այն եզրակացութեան է դալիս, որ Սուլթանի հպատակների կրած բոլոր անարդարութիւնները պէտք է վերադրել ներկայ վարչական սխառեմային : Այս է թրքամուլ պահպանողականի կարծիքը :

Ինչ էնք գտնում այն պաշտօնական աղբիւրի մէջ, որ վերջերումս հրատարակել է անգլիական կառավարութիւնը Տաճկա-Հայաստանի մասին : Մեր խօսքը Կապոյտ դրքի մասին է : Ընթերցողները երեւի արդէն ուրիշ թերթերից փոքրիչատէ ծանօթ են իբր բովանդակութեան հետ : Ուստի մենք կը բաւականանանք այստեղ մի ընդհանուր հայեացքով :—Հետաքրքիրն այն է որ այստեղ անգլիական կառավարութեան պաշտօնակատար գործակալներն իրանց բոլոր հեռագիրների ու տեղեկութիւնների մէջ կրկնում եւ պնդում են այն բոլորը, ինչ որ այնքան եռանդով միշտ աշխատել է հերքել նոյն կառավարութեան արտաքին գործոց նախարար Ֆերդիւսօնը : Այդ Կապոյտ դրքի առիթով վերջե-

րումս Պարլամենտում եղան խիստ յարձակումներ կառավարութեան քաղաքականութեան վրայ : Թիւրքա-Հայերի վերաբերութեամբ : Յարձակողներն էին Լատիվեոսօն, Լեվիսօն-Գօուէր, Շվանն եւ մանաւանդ Բլրայսը : Ֆերդիւսօնը պատասխանել է շատ մեղմ եւ յայտնել է, որ Կ. Պօլսի դեպքանին ինքն իրաւունք է տուել, մինչեւ անգամ պարտաւորեցրել է՝ միշտ միջամտել Տաճկա-Հայերին վերաբերեալ ամեն մի հարցի առիթով :

Այստեղ այս գրքոյի մէջ վանի փոխ-հիւպատոս Դեվին մանրամասն պատմում է վարդինիսի կոտորածը եւ ուրիշ շատ այդպիսի դէպքեր : Միւս փոխ-հիւպատոսները բերում են օրինակներ պաշտօնականների անընդունակութեան եւ հարկահանների զեղծումների :

Կլիֆֆորթ Լլոյդը, էրզրումի նախկին ընդհանուր հիւպատոսը՝ երբ Ուայսը պահանջում է նրան Կ. Պօլս տեղեկութիւններէ համար, ներկայացնում է մի մանրամասն զեկուցում, որ մեծ ուշադրութեան արժանացաւ թէ անգլիական Պալատում եւ թէ եւրոպական լրագրների էջերում : Այստեղ նա հեղինակաւոր ձայնով յայտնում է մօտաւորապէս հետեւեալը :

—Թողնելով մի կողմ ուրիշ կէտեր, որոնց մասին դեռ կարելի է վիճել, կան երեք կողմեր թիւրքահայերի դրութեան մէջ, որոնց բոլորն էլ ընդունում են եւ որոնց պէտք է ամենաշուտ դարման անել . 1. անապահովութիւն կեանքի եւ սեփականութեան՝ շնորհիւ քիւրդերի մշտական յարձակումներին . 2. անձնական անապահովութիւն եւ լիակատար բացակայութիւն խօսքի եւ գործի ազատութեան . եւ 3. քրիստոնեաների անհաւասար դրութիւն կառավարութեան աչքում՝ մահմեդականների հետ համեմատելով :

Յետոյ Լլոյսը բերում է մանրամասն ապացոյցներ ամեն մի կէտին : Եւ խոստովանում է որ հայ գիւղացին հիմա անկարող է հարկեր վճարել եւ ծանր դրութիւնից ազատելու համար երբեմն վճռում է թողնել իր տունը եւ գաղթել, երբեմն մինչեւ անգամ մտածում է կրօնափոխութեան մասին : Այն ինչ նա ընդունում է որ «աւելի արդար եւ խաղաղասէր քաղաքականութիւնը շատ օգտուէտ կը լինէր նոյն իսկ իրան թիւրքիայի համար, որովհետեւ նրա հպատակների թըւում միակ հայերն են, որ կարող են նպաստել նրա ֆինանսական դոյութեանը» :

Ակնարկելով էրզրումի անցեալ ամսուայ դէպքի մասին հիւպատոսն պնդում է. «այդ դէպքից յետոյ մինչեւ հիմա (հոկտեմբեր) ոչ մի մեղաւոր տաճկի չեն բանտարկել, եւ չեն էլ փորձել անգամ մեղաւորներին փնտրելու, այն ինչ շատ անմեղ հայեր այն ժամանակից մինչեւ հիմա դեռ եւս հեծում են բանտերում» . . . . .

Այսպէս են վերաբերում նոյն իսկ պահպանողականները եւ կառավարութեան ներկայացուցիչները Անգլիայում. իսկ թէ ինչպէս համակրանքով են վերաբերում դէպի հայկական հարցը ազատամիտ կուսակցութիւնը եւ ազատամիտ թերթերը, այդ արդէն բոլորին յայտնի է, եւ դրա մասին մենք չենք խօսիլ:

Ինչ վերաբերում է ուրիշ պետութիւններին, կարելի է ասել որ ամեն տեղ էլ՝ թէեւ շատ դանդաղ քայլերով սկսում է յառաջանալ նպաստաւոր հասարակական կարծիք հայկական հարցի մասին:

Վերջացնելով մեր խօսքը յիշենք մի բրօշիւրի մասին, որ նորերումս դուրս է եկել Թիւրքիայի վերաբերութեամբ: Նա հետեւորդներ է այն կողմից որ նրա մէջ յայտնած հայեացքները հետզհետէ աւելի եւ աւելի տարածվում են եւ ժամանակով դիպլոմատների խորհրդածութիւնների ու վճիռների աղբիւր կը դառնան: Խօսքս Լօյաննայում դուրս եկած Ռօզէնբուրգի «Ընդհանուր ղեկավարութիւն եւ Թիւրքիայի բաժանում» վերնագրով բրօշիւրի մասին է:

Մանրամասն խօսելով Եւրոպայում տիրող միլիտարիզմի (ընդհանուր սպառազինութիւն) եւ նրա ամեն կողմից կորստաբեր հետեւանքների մասին բոլոր պետութիւնների համար, հեղինակը գալիս է այն եզրակացութեան, որ այդ բոլոր պատերազմական պատրաստութիւնների դիւստոր պատճառը եւ եւրոպական խաղաղութեան դիւստոր սպառնալիքը՝ Արեւելեան հարցն է: (Ալլաւ-Լօթարինգայի հարցին նա համեմատաբար աւելի թօյլ նշանակութիւն է տալիս:

Այս կամ այն կերպ վճռելով այս դարաւոր արեւելեան հարցը, Եւրոպան միւնոյն ժամանակ վճռած կը լինի եւ այդ ընդհանուր ղեկավարութեան հարցը եւ կազատի եւրոպական յառաջդիմութեան գործը մշտական պատերազմի սպառնալիքից:

Յետոյ հեղինակն աշխատում է ապացուցել որ Արեւելեան հարցը վճռելու միակ միջոցը Թիւրքիայի բաժանումն է: Նա ասում է որ Օսմանեան պետութիւնը վաղուց արդէն ցոյց է տուել իր կատարեալ անընդունակութիւնը յառաջդիմելու եւ նոյն իսկ իր գոյութիւնը պահպանելու: Թիւրքիան վաղուց արդէն գոյութիւն չէր ունենալ, եթէ միայն եւրոպական մի քանի պետութիւնների մէջ տարածուած չլինէր այն սխալ կարծիքը, որ դեռ 1767 թուին արտասանեց Վիլլիամ Պիտտը եւ նրանից յետոյ կրկինց Գիզօն, այն է՝ թէ «Թիւրքաց պետութեան գոյութիւնն անհրաժեշտ է եւրոպական հաւասարակշռութեան համար»:

Հեղինակն աշխատում է ապացուցել այս մտքի սրելակ լինելը. եւ միեւնոյն ժամանակ ցոյց է տալիս այն օրումները, որ Եւրոպան կունենայ, եթէ Թիւրքերին բոլորովին հեռացնեն Եւրոպայից եւ Տաճկա-Հայաստանից:

տանից Փոքր-Ասիայի խորքերը եւ Արաբիա, եւ նրանց երկիրները բաժնեն նրանց հպատակ այն քրիստոնեայ ազգերի մէջ, որոնց մի ժամանակ պատկանում էին այդ հողերը:

«Ժամանակ է արդէն, ասում է նա, որ լուսաւոր աշխարհը ջնջի Եւրոպայի երեսից այս ամօթը եւ մի անգամ ընդ միշտ կտրի այս Գորդեան հանգոյցը»:

«Ժամանակ է դուրս հանել Եւրոպայի կրօնքից այս «եատագան»ը (կացիւնը), որ մըտք է գործել այնտեղ բարբարոսութեան դարերում», բերում է նա Գլադստօնի խօսքերը:

Փարիզում սկսել է դուրս գալ Փրանսերէն լեզուով մի լրագիր «Ժամանակակից Թիւրքիա» վերնագրով. դա թիւրք ազատամիտ կուսակցութեան «Երիզասարդ Թիւրքիայի» օրգանն է, եւ սաստիկ յարձակում է իր յօդուածների մէջ ներկայ Տաճիկ կառավարութեան վրայ: Այդ լրագիրը ջերմ պաշտպան է այն մտքին, որ պէտք է տալալել այդ կառավարութիւնը եւ բոլոր հրպատակ ազգերին, ի թիւս որոց եւ Հայերին, ապահովել կեանքի, գոյքի եւ կրօնի ազատութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ընկերութիւնս շարունակում է առանց աղմուկի եւ աւելի մեծ եռանդով ու փորձառութեամբ իր պատրաստողական գործունէութիւնը: «Իշնակցութիւնը» իր ցանցերը տարածում է բոլոր հայաբնակ տեղերում, շատացնում է հաստատակամ, հաւատարիմ ու փորձուած գործակալների թիւը, կազմակերպում է կամաւորների խմբեր եւ աշխատում է իր կարողութեան չափ հաւեցնել արթնացած ժողովրդի մէջ զէնքի ծարաւը: Կար ժամանակ երբ միայն խրախոյս եւ խօսք էր հարկաւոր ժողովրդին սթափեցնելու մահացու եւ ստրկական քնից, այժմ նա զարթել է եւ արդէն հասած է յեղափոխական գործունէութեան այն շրջանը, երբ պէտք է զինել եւ պատրաստել նրան կռուի համար հարստահարող կառավարութեան եւ աւազակ քրտերի դէմ: Այժմ Թիւրքաց Հայաստանի ազատութեան համար շօշափելի օգնութիւն է պահանջվում իւրաքանչիւր հայից եւ ոչ միայն խօսքեր. «զէնք, զէնք...» աղաչում է ընդդիմաբուրսութեան բոլոր միջոցներից զուրկ ժողովուրդը եւ միթէ վախկոտ անտարբերութեամբ պէտք է նայեն նոքա, որոնք կարող են դահանգնել ժողովրդի այդ ստիպողական պահանջը:

—Մայիսի 8-ին Կ. Պօլսի բանտերի անտանելի տանջանքներին չը դիմանալով՝ թոքախտ ստացաւ եւ վախճանուեց վանքի երիտասարդ Վարդան Գալստեան, 23 տարեկան հասակում:

Նա պարագմունքով—սրճագործ էր, եւ յայտնի իր

չըջանում իրբեւ հաստատակամ, անձնուէր եւ անկաշառ հայրենասէր: Մեղադրելով իրան յեղափոխական շարժումների մասնակցութեան մէջ՝ թուրք Կառավարութիւնը ձերբակալեց եւ եօթ տարուայ բանտարկութեան դատապարտեց Վարդանին: Եւրոպայում հրատարակուող հայ օրգանները մանրամասն նկարագրեցին Վարդանի ազդու եւ փառաւոր յուզարկւորութեան հանդէսը: Երիտասարդ նահատակի դիակը հաւաքել էր Պօլսի Մայր եկեղեցու մէջ ահագին բազմութիւն: Ներկայ եղողները՝ առաջինից մինչև վերջինը վառուած էին այն զգացումներով եւ վաղափարով, որոնց զոհ գնաց երիտասարդը:

—Վանից ուղարկուած է մեզ հետեւեալ տեղեկութիւնը. «գրելու, խօսելու եւ մինչեւ անգամ լաց լինելու ազատութիւն չունենք, ոչ միայն դպրոցներս սահմանափակուեցան, այլեւ իսպառ զրկուել ենք մեր մայրենի լեզուով գրուածները ուսումնասիրելուց. ոչ միայն անթոյլագրելի է մեր նախահայրերի մատենագրութեան ընթերցանութիւնը, այլ եւ որի մօտ որ մի այդպիսի դիրք գտնուի, բանտարկութեան կրենթարկուի: Եթէ այսպէս շարունակուի, քիչ օրից եկեղեցու դռները եւս պիտի փակենք, որովհետեւ արդէն եկեղեցական դրքեր եւս վնասակար նկատելով հետզհետէ նոր եկած դրեանք մաքսատան մէջ կը ձերբակալուին. Շարականներ կը ձերբակալուին առարկելով թէ վնասակար օրհներգներ գրուած են հայոց թաղաւորների անունով, մանաւանդ թէ «Հայաստան աշխարհ, զօրաւարք հայոց» եւ այլ վնասակար խօսքեր են գործածուած, ժամադիրք եւս միեւնոյն յանցանքով կը դատապարտեն: Տօնացոյցներ եւ օրացոյցներ եւս կը ձերբակալեն, ըստ որում վնասակար համարուած հայոց սուրբերի տօները ցոյց կը տան: Իսկ Հայոց պատմութիւն եւ Հայաստանի աշխարհագրութիւն ծախողը եւ կարդացողը քաղաքական յանցաւորների ամենամեծ մեղաւորը ճանչցուած է»:

—Ապահովութիւնը կատարեալ է—պնդում էր Սուլթանը դեսպանների առաջ, եւ ահա այդ բոլորին աւազակային խումբը Պօլսի քթի տակ կանգնեցնում է երկաթուղու դնացքը, թալանում է ճանապարհորդներին եւ 5 գերմանացիներ էլ գերի տանելով երկու հարիւր հազար Փրանկ փրկանք է պահանջում Թիւրքաց կառավարութիւնից: Գերմանական դեսպանը ստիպեց Բ. Դոան այդ փրկանքը տալ եւ ազատել Եւրոպացիներին:

Նոյն գերմանական դեսպանը միայն այդ դէպքից յետոյ աչքը բաց արաւ, նա դիմեց Բ. Դոան հարցնելով եթէ Պօլսի մօտ այդպիսի դէպքեր են պատահում,

ապա ի՞նչ սարսափելի բաներ կը լինեն կատարվում երկրի ներքին նահանգներում, անպաշտպան Հայաստանում: Այսպէս է Եւրոպան. մինչեւ նրա կաշուին չի հասնում հարուածը, նա ձայն չէ հանում:

Ի դէպ. հարկաւոր ենք համարում յիշեցնել, որ այդպիսի աւազակային խմբեր շատ տարածուած էին յունաց ապստամբութեան ժամանակ: Դոքա կազմվում էին քաղաքական նպատակներով, եւ այդ տեսակներից մեծ դեր կատարեցին յունաց ապստամբեան դործի մէջ:

—Կիլիկիայից հաղորդում են հետեւեալը. «Նորերս Մարաշի մէջ փորձ եղաւ կառավարչական պալատը եւ կառավարչի տունը դինամիտով օդը բարձրացնել: Սակայն այդ մտադրութիւնը բացուեց եւ արգելուեց: Թէ ովքեր են եղել այդ փորձի հեղինակները—մինչեւ այժմ էլ գաղնիք է:

Կառավարութիւնը ամեն քայլափոխում կասկածներ է տանում եւ բռնութիւններ դործ դնում: Անցեալ ամսին Հալէպից մի հայ գալիս է Մարաշ իր ընտանիքը այցելելու համար: Կառավարչական պաշտօնեաները կասկածելով, թէ նա գաղտնի նամակներ է բերել Հալէպից, դնում են այդ մարդու տունը, տակնու վրայ անում, նրան էլ ձերբակալում: Խեղճ կինը երկիւղից վիժեց եւ մեռաւ:

—Լօնդօնի «Դէյլի Նիւս» լրագրում տպագրուած է հետեւեալ հեռագիրը. «Հայաստանում բոլորովին դժուարութիւն չունի խաղաղութիւն, ինչպէս հաստատում են Պօլսում: Բայագէղի մօտ պատահած դէպքի մասին պաշտօնապէս յայտնուած է պատրիարքարանին: Մի քանի թուրք զինուորներ ժամասացութեան ժամանակ մտնում են հայոց եկեղեցին, եւ մատնացոյց անելով այն բանի վրայ, որ ժամբողութեան ժամանակ Թագաւոր խօսքը դործ են ածում Աստուծու վերաբերութեամբ իսկ Թագուհի խօսքը Մարիամ Կոյսի վերաբերմամբ, յայտնում են որ հայոց ժամասացութիւն դաւաճանութեան բնաւորութիւն ունի, եւ այդ հիման վրայ յարձակում են քահանայի վրայ եւ սրբապղծութիւն դործում»:

—Սուլթանը եւ իր համախոհ նախարարները սատիկ ցանկութիւն ունեն պատրիարքացնելու Պրուսացի առաջնորդ Բարթոլոմէոս եպիսկոպոսին: Այդ եպիսկոպոսը Սուլթանին նուիրուած եւ Հայոց հարցին թշնամի մի անձնաւորութիւն է. Նորերս Սուլթանը անձամբ նրան ընդունեց, պատիւներ, շքանշաններ տուեց եւ խօստացաւ պատրիարքացնել նրան: Բարթոլոմէոսը խօստացել է այդ բոլորին փոխարէն «ոչնչացնել այն չարամիտները, որոնք Հայաստանի մասին կը խորհին»: Այժմ ինքը Թիւրքաց կառավարութիւնն է աշխա-



տու՛մ դահընկեց անեւ Սորէն պատրիարքին, որովհետեւ կարծում է թէ «Բարթոլոմէոսը աւելի նուիրուած ծառայ է, քան Սորէն»:

—Պօլսից: Բ. Դուռը յարմար ըստէն ձեռքից բաց է թողնում խախտելու այն իրաւունքները, որոնք վաղուց ի վեր տուած են Պօլսի Հայոց պատրիարքարանին: Յայտնի է որ Սիսի եւ Աղթամարի կաթողիկոսները եւ Երուսաղէմի պատրիարքը անմիջապէս ենթարկուած են Պօլսոյ պատրիարքարանի իրաւասութեանը: Այժմ Թիւրքաց կառավարութիւնը ուզում է խախտել յիշեալ հիմնարկութիւնների յարաբերութեան այդ ձեւը եւ իրաւունք տալ, որ առաջին երեք հիմնարկութիւնները, չը ճանչնալով Պօլսի Պատրիարքին՝ ուղղակի Բ. Դուռն հետ յարաբերութիւններ սկսեն: Նպատակը պարզ է: Եւ ցաւն այն է, որ այդ տեսակ վտանգաւոր դիմումների դէմ բողոքող ոչ ընդունակ պատիարք ունենք Պօլսում, եւ ոչ Ազգային ժողով:

—Բ. Դուռը էլի մի խումբ մարդիկ հայոց յեղափոխականներից աքսորեց դէպի Արաբիան, Տրիպօլիս եւ ուրիշ տեղեր: Կառավարութիւնը այնքան երկչոտ է դարձել, այնքան վախենում է ժողովրդի դանդաղներից եւ ցոյցերից, որ բոլորին աքսորում է ծածուկ կերպով, գիշերները, մէկ մէկ, ամուր շղթաներով կապկապած:

Ոստովանում ենք, օսմանեան կառավարութեան այդ երկիւղը անհիմն չէ: Ապագան սարսափելի դէպքեր է բերելու նրա գլխին....

—Թիւրքաց Հայաստանի մի քանի կողմերում, ինչպէս մեզ հաղորդում են մեր գործակալները, ժողովրդական ուղեւորութիւնը եւ ինքնապաշտպանութեան դործը արագ կերպով առաջ է դնում: Ժողովուրդը ինքն իր ձեռքով հեռացնում է կասկածելի տարրերը իր միջից: Հայաբնակ զեւեղերում ժողովուրդը վախում է իր միջից քուրդ հովիւներին եւ զիշերապահներին, և իրանք են կատարում այդ պաշտօնները: Պատահի է դէպք որ կարեւոր խորհրդի ժամանակ հայ կանայք են պատահաւոր կանգնել կողոնների վրայ:

—Միացեալ նահանգների դադթական հայերը պատրաստվում են մի կենտրոն հաստատել բոլոր տեղերի դադթական հայերի մէջ. միացնել Հնդկաստանի, Եւրոպայի զանազան տեղերի, Ամերիկայի եւ եթէ կարելի է եւ Ռուսաստանի հայերին եւ դոցա կողմից ընդրել մի կենտրոն, որը իրեն նուիրէր Հայաստանի ինքնուրոյնութեան հարցին, — ահա նպատակը: Կենտրոնը, իբրեւ ընտրուած ներկայացուցիչ մարմին, իբաւունք ունի ամեն տեսակ միջոցների դիմել՝ առաջ մղելու հայոց հարցը: Նախապատրաստական յանձնաժողովը Նիւ Եօրքից հրաւէր է կարգում բոլոր դադթական հայերին իրենց կարծիքը յայտնելու այդ մասին, եւ պատրաստուելու այդ ընդհանուր ժողովի համար, որ մտադ-

րութիւն կայ կայացնել 1891 թւի նոյեմբերին Եւրոպայի քաղաքներից մէկում: Այս առիթով մենք կասենք որ միտքը շատ համակրելի է, եւ վաղուց հարկաւոր էր զանազան երկիրների դադթական հայերին միանալ, ոչ թէ առանձին, առանձին երգ երգել...

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԷՐԶՐՈՒՄԻՑ

Մայիս 13-ին 1891 թիւ.

Կարնոյ մէջ կառավարչական ուղղակի ճնշումները եւ հալածանքները տեղի կունենան խիստ բացորոշ երեւոյթների տակ: Գաղանքի ոստիկան լրտեսներու թիւը բազմացած լինելով անմեղ յարաբերութիւնք անգամ կասկածանօք կը դիտուին:

Շարաթ մը առաջ քաղաքիս Ազգային մայր-վարժարանն կառավարչական յանկարծակիան խուզարկութեան ենթարկուեցաւ, մատնիչ մը կամ ոստիկանութեան դադտի լրտես մը, որոյ անունը առայժմ զանց կընեմ հռչակելու, կառավարութեանը յայտնած է թէ ազգային վարժարանների մէջ «միւզեր» համարուած եղիչէ մատենադրութիւնը դաս կը տրուի: Ուղարկուեցին ոչինչ արդիւնք ունեցաւ. այս առիթով վարժարանների նախկին փոխ-տեսուչը հարցաքննութեան ենթարկուած է:

—Այլակերտէ առնուած տեղեկութիւնք խիստ տրխուր կը նկարագրեն այն տեղի Հայոց վիճակը. յափշտակութիւն եւ ընչից կողոպուտ գրեթէ ամեն օր տեղի կունենան: Տեղույն նախկին կառավարիչը որ նոյն իսկ Եւրոպայի ծանօթ վաղեմի եղեռնագործ Ահմեդ-պէյն է, խեղճ ժողովուրդը կը կեղեքէ անդթաբար: Իւր անհիմն ամբաստանութեան եւ զրպարտութիւններուն իբրեւ զոհ, Այլակերտի մէջ բանտարկուած են 10 ամսէ ի վեր 12 հոգի. իսկ այստեղ իբրեւ քաղաքական յանցաւոր նոյն տեղացի 9 հոգի, որոնց մի քանիսին դեռ եւս քննութիւն իսկ ըրած չեն: Նախկին կուսակալը վերջերս Այլակերտ կատարած քննական պտոյտին մէջ բռնութեամբ մինչեւ անգամ ձեծելով եւ բանտարկելով Թօփրախ-կալէի հայոց քահանան ստորագրել տուած է ժողովրդեան կայսեր շնորհակալած դիր մը:—Կառավարական տուրքերը այստեղ խստութեամբ կը հաւաքուին. երեւակայեցէք որքան դժուարին կացութիւն որ Ոստուր վիւզի մէջ տուներ կը քանդուին փայտերն ծախելու եւ դրամները տրոց փոխարէն կառավարութեան տրուելու համար:

Ամեն տեղ շրջակայքում հայ վաճառականների ստացած ապրանքները կը խուզարկուին որ չի լինի թէ մէջը գէնք լինի: Իսկ հայ գինադործների շուրջը տասնեակ լրտեսներ կը պտտին, որ մի դուցէ դրանք իրենց ազգակիցներին գէնք բաժանեն եւ կամ նոցա համար գէնք շինեն:—

Կարնեցի